ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՏԴ 342.1
DOI: 10.56246/18294480-2023.15-43

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ
Գավառի պետական համալսարանի և
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
էլփոստ՝ hranush.hranti@gmail.com

Հոդվածը նվիրված է հայկական Սփյուռքի ձևավորման պատճառներին, փուլերին, հիմնական առանձնահատկություններին: Հեղինակը նշում է, որ հայկական Սփյուռքը հայրենիքում և Սփյուռքում ապրող մարդկանց համամասնությամբ աշխարհում խոշոր սփյուռքներից մեկն է, քանի որ ազգի 2/3-ը ապրում է ազգային պետության սահմաններից դուրս: Այն պատմական ծագմամբ հիմնականում առաջացել է հայոց ցեղասպանության հետևանքով և սփյուռքագիտության մեջ ընդունվել է որպես զոհի կարգավիճակ ունեցող սփյուռք, ինչպես, օրինակ, հրեական և պաղեստինյան սփյուռքներն են: Անդրադարձ է կատարվում տարբեր պետություններում հայկական Սփյուռքի իրավական վիճակին: Այն գրանցված է որպես սահմանադրական համայնք (Լիբանան), կրոնական համայնք (Իրան), հասարակական կազմակերպություն (Արևմտյան Եվրոպա, Ամերիկա), ազգային փոքրամասնություն (Արևելյան Եվրոպա) և այլ կարգավիճակներով:

Անդրադարձ է կատարվում հայոց ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության խնդիրներին: Արվում է այն եզրակացությունը, որ անհրաժեշտ է վերանայել և լրացնել միջազգային իրավունքն այնպես, որ նրա նորմերը կիրառվեն իմպերատիվ կարգով: Եթե ՄԱԿ-ի անդամ պետությունն իրավախախտում է կատարել՝ ոտնահարել է միջազգային նորմերը, չի կատարել իր ստանձնած պարտավորությունները, ապա պետք է ենթարկվի միջազգային պատասխանատվության՝ անկախ նրա ունեցած բնական պաշարներից և ռեսուրսներից: Հեղինակը վերլուծում է միջազգային հանցագործություններով պատճառած վնասի փոխհատուցման երեք ձևերը՝ ռեստիտուցիան, կոմպենսացիան և սատիսֆակցիան: Քննարկվում են Սփյուռքի առջև ծառացած մարտահրավերները, ազգային ինքնության պահպանման խնդիրները, առաջարկվում են դրանց դիմակայման և խնդիրների լուծման ուղիներ:

Բանալի բառեր՝ *Սփյուռք, հայրենիք, ցեղասպանություն, Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ), համաշխարհայնացում, ազգային ինքնություն, միջազգային իրավական պատասխանատվություն, ռեստիտուցիա, կոմպենսացիա, սատիսֆակցիա, անվտանգություն:*

«Սփյուռք» (Diaspora) բառը հունարենից թարգմանաբար նշանակում է «dia»՝ ծայրից ծայր և «speirein»՝ ցրում[1]: Պատմական աղբյուրները վկայում են, որ «Սփյուռք» եզրույթն օգտագործվել

---

[1]. Տե՛ս http://www.merriam-webster.com/dictionary/diaspora: Տե՛ս նաև **Дятлов В., Мелконян Э.,** Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, Институт Кавказа, 2009, էջ 8:

է դեռևս հին Հունաստանում: Եբրայերենում «Սփյուռք» հասկացությունը գործածվել է՝ բնորոշելու համար հրեաների աքսորը Պաղեստինից:

Ներկա աշխարհաքաղաքական վայրիվերումների, տարածաշրջանային հակամարտությունների, քաղաքական ռեժիմների փոփոխությունների, բնական աղետների պայմաններում արտագաղթի, միգրացիայի վիճակագրությունը ոչ թե հազարների, այլ միլիոնների է հասնում: Բնակչության տեղաշարժերը պայմանավորված են տարբեր՝ աշխատանքի, կրթության, առողջապահական, առևտրային, մշակութային և այլ հանգամանքներով: Ցավոք, դրանց ավելացել են մարդկանց թրաֆիկինգը, բռնի տեղահանումները, էթնիկ զտումները:

Սփյուռքագետները, պատմաբանները, քաղաքագետները, հոգեբանները, սոցիոլոգները, իրավաբանները լրջորեն ուսումնասիրում են սփյուռքը և նրա հետ կապված հասարակական-քաղաքական, ազգային և անդրազգային երևույթները:

«Անդրազգային» հասկացության հիմքում ընկած է «Սփյուռքը», իսկ «համաշխարհայնացում» եզրույթի հիմքում՝ «անդրազգայինը»: Խոսելով «Հայկական սփյուռքի՝ տեղահանության արդյունքում կերտված ազգայնականությունից դեպի սփյուռքյան անդրազգայնություն անցում կատարելու» մասին՝ Խ. Թոլոլյանը նշում է, որ հայկական սփյուռքը գլոբալ երևույթ է և բաղկացած է տվյալ երկրին բնորոշ «էթնիկ» առանձնահատկություններ ունեցող համայնքներից: Հայկական սփյուռքի հիմնական առանձնահատկություններն են՝ կազմակերպվածությունը, մի շարք հաստատությունների առկայությունը, որոնք ստեղծվել են համայնքի կարիքներից ելնելով և երբեմն ունեն նաև հստակ անդրազգային օրակարգեր: Այսպիսով, սփյուռքյան համայնքը կրում է էթնիկ և սփյուռքյան մշակութային ինքնությունների համադրությունը, ինչպես նաև քաղաքական փորձառությունը[2]:

Վերջին ժամանակներս տարածում է գտել այն տեսակետը, որ աշխարհը սփյուռքանում է, որին տարբեր կերպ են արձագանքում ելքի երկրները: Հայ ժողովուրդը ճակատագրի բերումով աշխարհասփյուռ է դարձել, և ցավալիորեն նրա մեծամասնությունը բնակվում է այլ երկրներում և կրում է համաշխարհայանցման ու ազատականացման և՛ դրական, և՛ բացասական ազդեցությունները: Դարերի ընթացքում հայերի տեղաշարժերը պայմանավորված են եղել պատմական, ազգային-կրոնական, տնտեսական, քաղաքական գործոններով: Պետականության երկարատև կորստի պայմաններում հայերն օտար բռնապետների կողմից ենթարկվել են անասելի ճնշումների ու հալածանքների: Հայերը, լինելով աշխատասեր, արարող, նախաձեռնող, նպատակասլաց մարդիկ, անընդհատ տեղաշարժվել են, ընդլայնել և՛ գործունեության սահմաններն ու ոլորտները, և՛ աշխարհաճանաչողությունը: Երբեմնի հզոր Հայաստանը մասնատվել է, հայերը դաժան ճակատագրի հարկադրանքով աշխարհասփյուռ են դարձել, իսկ 1915 թվականին գրեթե ամբողջությամբ արմատախիլ եղել, հայրենազրկվել և աշխարհատարած դարձել օսմանյան կայսրության կողմից կազմակերպված հայաջինջ քաղաքականության՝ ցեղասպանության և դրա սոսկալի դրսևորումների հետևանքով, ուստի Սփյուռքի գիտական ուսումնասիրությունը, Սփյուռքի համայնքների, անդամների իրավունքների, ազատությունների հստակ միջազգային իրավական ակտերով ամրագրումը խիստ կարևոր են և արդիական: Սփյուռքներն ունեն և՛ նմանություններ, և՛ տարբերություններ, իրենց բնորոշ առանձնահատկություններ:

Եթե դիտարկենք հայկական Սփյուռքի առանձնահատկությունները՝ համեմատելով այն այլ սփյուռքների հետ, ապա կարող ենք ընդգծել հետևյալ տարբերությունները.

---

[2]. Տե՛ս **Tölölyan Kh.**, Elites and Institutions in the Armenian Transnation, Diaspora: A Journal of Transnational Studies, Volume 9, Number 1, Spring 2000, pp. 107-136, https://muse.jhu.edu/article/444315/pdf; Առավել մանրամասն տե՛ս **Butler K.,** Defi ning Diaspora, Refi ning a Discourse, Diaspora 10 (2), 2001, pp. 189-219, http://sites.middlebury.edu/nydiasporaworkshop/ files/2011/04/Defi ning-Diaspora1.pdf:

1. Հայկական Սփյուռքը հայրենիքում և Սփյուռքում ապրող մարդկանց համամասնությամբ աշխարհում խոշոր սփյուռքներից մեկն է, քանի որ ազգի 2/3-ը ապրում է ազգային պետության սահմաններից դուրս:

2. Այն պատմական ծագմամբ հիմնականում առաջացել է Հայոց ցեղասպանության հետևանքով, և սփյուռքագիտության մեջ մեկ-երկու սփյուռքների պես դասակարգվել է որպես զոհի (հայկական, հրեական, պաղեստինյան) կարգավիճակ ունեցող սփյուռք: Կան սփյուռքի այլ դասակարգումներ՝ առևտրային, կրթական (չինական), աշխատանքային (թուրքական, ֆիլիպինյան), մշակութային (իտալական) և այլն[3]:

3. Հայկական Սփյուռքն աչքի է ընկնում տեղաշարժերի ակտիվությամբ Միջին Արևելքից դեպի Արևմուտք, վերջին շրջանում Հայաստանից դեպի Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Եվրոպա:

4. Այն ամենատարածվածներից է աշխարհում. մոտ 120 երկրում բնակվում են հայկական համայնքներ:

5. Ունի ամուր, կայացած կառուցվածք, կուսակցություններ, բարեգործական հաստատություններ, կրթական, մարզական, մշակութային կարևոր կենտրոններ, հասարակական մեծաթիվ կազմակերպություններ, եկեղեցական հզոր ցանց:

6. Ցավի, դժվարությունների պահերին կարողանում է արագ համախմբվել և օգնել հայրենիքին, ինչպես օրինակ երկրաշարժի, ղարաբաղյան պատերազմների, Արցախի վերակառուցման ժամանակ…

7. Հայկական Սփյուռքը չի կորցնում իր զգացական կապը Հայրենիքի հետ, քանզի ունի իր ոտնահարված իրավունքների վերականգման խնդիր և հայոց պետության հետ պայքարում է հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման համար, որն առավել համախմբում և միասնական է դարձնում Սփյուռքը:

Կարելի է փաստել, որ **հայկական Սփյուռքն անցել է ձևավորման հինգ փուլ**:

Առաջին փուլը կարող ենք թվագրել 4-5-րդ դարերից մինչև 1894թ.: Տարբեր պատճառներով մեծ չափերի են հասել հայերի արտագաղթերը հայրենիքից Ղրիմ, Ռումինիա, Հունգարիա, Բուլղարիա, Լեհաստան, Կիևյան Ռուսիա և այլուր, որտեղ համայնքների ձևավորմանը գուգահեռ կազմավորվել են եկեղեցական թեմեր՝ դառնալով գաղութի պահպանման ու հայապահպանության գլխավոր երաշխավորները: Հայկական սփյուռքի ձևավորման պատմության մեջ բեկումնային էր 1604-1605թթ.՝ Շահ Աբաս Առաջինի կազմակերպած՝ հայերի (300 հազարից ավելի) բռնի տեղահանումը և նրանց բնակեցումը Պարսկաստանում: Շահի նպատակ էր հայ աշխատասեր և կարող մարդկանց ուժերով նպաստել իր երկրի տնտեսական զարգացմանը[4]:

Երկրորդ փուլը ներառում է 1894-1923թթ., որը համարվում է հայկական Սփյուռքի ձևավորման հիմնական ժամանակաշրջանը: Թուրքիայում Աբդուլ Համիդ 2-րդի (Արյունարբու) կողմից 300 հազար հայերի ջարդը, 100 հազար հայի բռնի մահմեդականացումը և այլ հանցագործությունները պատճառ են դարձել պատմական հայրենիքից հայերի արտագաղթի[5]

---

[3]. Տե՛ս **Cohen R.** Global Diasporas: An Introduction. Second edition, London and New York, 2008, http://prodiasporaromana.org/wpcontent/uploads/2014/01/Cohen-2008-Global-Diasporas-An-Introduction-2n Bookos.org.pdf:

[4].Տե՛ս Дятлов В., Мелконян Э. Там же, с. 44.

[5].Ավելի մանրամասն տե՛ս **Կիրակոսյան Ա.,** Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմահրավական եռալեզու տեղեկանք), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2006, էջ 11-12: Տե՛ս նաև **Կիրակոսյան Ա.,** Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան, «Տիգրան Մեծ», 2006, էջ 135: **Deringil S.**, The Armenian Question Is Finally Closed: Mass Conversion of Armenians in Anatolia during Hamidian Massacres of 1895-1897, Comparative Studies of Society and History, Cambridge, 2009, 51 (2), pp. 344-370:

ահագնացմանը: Հազարավոր հայեր (անգլիացի վիճակագիր Միլոնի տվյալներով՝ շուրջ 600 հազար հայ) տարագրվել են տարբեր երկրներ, ամայացել են Արևմտյան Հայաստանի և օսմանյան կայսրության շատ հայաբնակ վայրեր:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրք պարագլուխները, օգտվելով պատերազմի ընթացքում ստեղծված անկայուն իրավիճակից, կազմակերպել և իրականացրել են ավելի քան 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը հայերի սեփական հայրենիքում, որն իր նմանը չէր ունեցել մարդկության պատմության մեջ: Նրանց մի մասին կոտորել են, մյուս մասին քշել անապատ ու սովի մատնել, իսկ երրորդ մասին էլ պարտադրել կրոնափոխվել կամ ցիրուցան լինել աշխարհով մեկ: Դրա հետևանքով եղեռնազարկ է եղել, հայրենազրկվել է մի ողջ ժողովուրդ, կորցրել իր հողը, ունեցվածքը, լեզուն, կենսակերպը, մշակույթը, կրոնը, և մինչ օրս նրա արդար իրավունքներն ու շահերը վերականգնված չեն: Ցեղասպանությունից մազապուրծ եղածների մի մասը փրկություն է գտել Արևելյան Հայաստանում[6], իսկ մյուսները սփռվել են աշխարհով մեկ՝ ստվարացնելով նախկին գաղթօջախները, ինչպես նաև հիմնելով նորերը[7]: Ժողովրդի մի հատվածը, հաստատվելով այլ երկրներում, կարողացել է օտար ափերում պահպանել իր ազգային ինքնությունը, դիմագիծը, լեզուն: Դիմակայելով բազմաթիվ փորձությունների ու խոչընդոտների՝ հայ ժողովրդի բեկորները տարբեր հասարակություններում ստեղծել են հոգևոր ու նյութական անանց արժեքներ և դրանցով իսկ հարստացրել նաև համաշխարհային քաղաքակրթության գանձարանը՝ շարունակելով պայքարել իրենց իրավունքների վերականգման համար:

Երրորդ փուլում Միջին Արևեքից տարբեր երկրներ տեղաշարժերի, ապա և հայրենադարձության հետևանքով 1923-1948թթ. Հայկական Սփյուռքը կառուցվածքային լուրջ փոփոխությունների է ենթարկվել:

Հայերը նախ հաստատվել են Մերձավոր Արևելքում, ապա տեղափոխվել Արևմուտք (1930-ական թվականներից սկսած), ինչպես նաև Հայաստան: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խորհրդային պետությունը որդեգրել էր մի քաղաքականություն, որի արդյունքում 1946-1948թթ. կազմակերպվեց հայրենադարձություն: Այն հայ պատմագիտության մեջ մտավ «Մեծ հայրենադարձություն» անունով[8]: Հայրենադարձները ոչ միայն փոխեցին ժողովրդագրական պատկերը, այլև նպաստեցին Հայաստանի տնտեսական, սոցիալական, մշակութային կյանքի զարգացմանը: Փոփոխվեց նաև Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Հունաստանի, Իրանի, Ֆրանսիայի համայնքների կառուցվածքը:

Չորրորդ փուլում՝ 1948-1991թթ. զգալի փոփոխություններ կրեց Սփյուռքը: Հայաստանում հատկապես 1960-ական թվականներին որոշակի ներգաղթ արձանագրվեց, ձևավորվեցին ու բարգավաճեցին նոր քաղաքներ ու ավաններ, որոնք կոչվեցին Նոր Մալաթիա ու Նոր Սեբաստիա,

---

[6].Ցեղասպանությունից հետո նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետությունում էր ապաստանել 500 հազար գաղթական, որոնցից 350 հազարը միայն Երևանի նահանգում (տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, Հ. 1, Առաջին տարին, 1918-1919, Երևան, «Տիգրան Մեծ», 2005, էջ 135):

[7].Մոտավոր հաշվարկներով մինչև 1915թ. գաղութահայության թիվը (առանց ռուսական կայսրության տարածքում բնակվողների) կազմել է 175 հազար մարդ: Հայոց ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ սփռված սփյուռքահայության թիվը 1920-1922թթ. տվյալներով հասել է մոտավորապես 870 հազար մարդու, որոշ աղբյուրներով՝ մեկ միլիոնի (տե՛ս **Ստեփանյան Ա.,** XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում (պատ. խմբ.՝ Հ. Տ. Մարության), ՀՀ ԳԱԱ հնագիտ. և ազգագրութ. ինստ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 27-28):

[8].Հայության ներգաղթը սկսվել է 1919թ. և շարունակվել մինչև 1970-ական թթ.: Խորհրդային իշխանությունների կողմից կազմակերպված ներգաղթն ընթացել է չորս փուլով՝ 1921-1926թթ., 1932-1936թթ., 1946-1948թթ. և 1962-1974թթ. (տե՛ս **Ստեփանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 306-316):

Նոր Արաբկիր ու Նոր Զեյթուն, Նոր Կիլիկիա ու Նոր Արեշ, Նոր Հաճն ու Նոր Խարբերդ, Նոր Եդեսիա և այլն[9]:

Հայաստանի անկախացումից հետո (1991թ.) սկիզբ առավ Սփյուռքի հետ հարաբերություն-ների զարգացման նոր՝ **հինգերորդ փուլը**: Անկախությունը մեծ ոգևորություն առաջացրեց Սփյուռքում: Յուրաքանչյուր հայ ցանկության դեպքում առանց դժվարության կարող էր այցելել Հայաստան՝ ի տարբերություն խորհրդային ժամանակների, երբ սահմանները փակ էին: Մյուս կողմից, ցավոք, 1990-ական թվականներից սկսվեց արտագաղթը Հայաստանից, որն ուներ և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Երկաթյա վարագույրի բացումը, Սպիտակի երկրաշարժը, Ղարաբաղյան պատերազմը, ադրբեջանից 400 հազար հայի բռնագաղթը, էներգետիկ ճգնաժամը պարարտ հող դարձան ժողովրդագրական բացասական տեղաշարժերի համար:

Հայաստանից հիմնականում հեռացան՝

1. այն մարդիկ, ովքեր հայրենադարձվել էին տարբեր ժամանակներում և չէին հարմարվել խորհրդային վարչակարգին, սոցիալական պայմաններին,
2. ադրբեջանից բռնագաղթածների մի ստվար հատվածը, որը չուներ ապրելու տարրական պայմաններ,
3. տնտեսական և պատերազմական դժվարություններին չհարմարվող մարդիկ (օրական ընդամենը 2-ժամյա էլեկտրաէներգիայի պայմաններում շատերը չդիմացան և հեռացան),
4. արևմուտքում պահանջարկ ունեցող մասնագետները, որոնց աշխատուժը էժան գնով «գնվեց» և, ինչպես ընդունված է ասել, «ուղեղների արտահոսք» տեղի ունեցավ:

Այնուհանդերձ, Հայաստանի Հանրապետության անկախացումը հզոր լիցք հաղորդեց Սփյուռքին և նոր պատմական փուլ սկսվեց ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում: Հայկական Սփյուռքն ուղղեց իր ողնաշարը, ձգվեց դեպի հայրենիք և սկսեց տարբեր ձևերով օգնել, ծառայել Մայր հայրենիքին, նույնիսկ հազարավոր հայրենադարձվողներ եղան:

Հայկական Սփյուռքի կենսունակությանն ու ակտիվությանը նպաստում են նրա կողմից ստեղծված բազում համահայկական և հայկական կառույցներն ու կազմակերպությունները, հայ եկեղեցին, ինչպես նաև վերջին 30 տարում համակարգված ու փոխլրացնող հարաբերությունները հայրենիքի հետ: Հայոց պետությունը ջանում է սատար կանգնել հայկական Սփյուռքին հայապահպանությանն ուղղված հիմնախնդիրները լուծելիս, իսկ Սփյուռքն էլ իր կապերը, հնարավորությունները, կարողություններն է փորձում ներդնել Հայաստանի և Արցախի շենացման գործում: Բացի տարածաշրջանային (Սիրիա, ՌԴ, Ուկրաիա, Վրաստան, Իրաք, Արցախ...) մարտահրավերներից, որոնց դեմ հանդիման հայտնվում են նաև հայերը, աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող ահաբեկչություններից ու հակամարտություններից ևս տուժում են հայ համայնքի ներկայացուցիչները: Հայկական Սփյուռքի վրա անմիջական ազդեցություն է թողնում համաշխարհայնացման անկասելի գործընթացը, որը սպառնում է հայ ինքնությանը, հանգեցնում ազգային դիմագծի կորստի, համահարթեցման, կլանում փոքր ազգերի լեզուն ու մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները: Շարունակում է սպառնալ ուծացման վտանգը: ՀՀ սփյուռքի նախարարությունը, գործակցելով Սփյուռքի, նրա հիմնական կառույցների հետ, մշակել էր Հայաստան-Սփյուռք գործակցության ռազմավարություն և պետական քաղաքականության հիմքում դրել այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են 10 միլիոն հայի ներուժի օգտագործումը Հայաստանի հզորացման ու բարգավաճման, Արցախի Հանրապետության պաշտպանության և անվտանգության ապահովման հարցերում, համատեղ ուժերով

---

[9].Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985թթ., միջազգային գիտաժողովի զեկուցումներ (8-10 հոկտեմբեր, 2010թ., Երևան-Ծաղկաձոր), Հայաստանի ազգային արխիվ, Խմբ. խորհուրդ՝ Ա. Վիրաբյան և ուրիշներ, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2011, էջ 37:

ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացի շարունակման և Սփյուռքում հայ ինքնության պահպանման համար պայքարի գործում:

Եթե փորձենք բնութագրել հայկական Սփյուռքը՝ որպես դարերի ընթացքում ձևավորված հանրություն, ապա պետք է նշենք, որ այն

- պատմական հայրենիքից և Հայաստանից դուրս ապրող շուրջ յոթ միլիոն հայությունն է (չհաշվված շուրջ երկու միլիոն իսլամացած և ծպտյալ հայերը)՝ մարդիկ, ովքեր պահպանել են պատմական հիշողությունը և գիտակցական ու զգացական կապը Հայրենիքի հետ, ստեղծել են 40-ից ավելի համահայկական և մոտ 30 հազար հայկական կառույցներ, հայկական ավանդական կուսակցություններ, Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ)՝ տարբեր երկրներում իր կենտրոններով, հայ եկեղեցու տարածված և ամուր ցանց,
- գոյացել է հիմնականում ողբերգության, բռնի տեղահանությունների և ցեղասպանության, ինչպես նաև անկախությունից հետո Հայաստանից արտագաղթած և նախկին խորհրդային հանրապետություններում բնակվող հայերի համախմբման հետևանքով,
- բոլոր ջանքերը ներդնում է հայ ինքնությունը, հայոց պատմությունը, անցյալի մասին հավաքական հիշողությունը պահպանելու համար, ունի պատմական հայրենիքի նկատմամբ նվիրվածություն, ձգտում է պահպանել իր ազգային որակները, լեզուն, մշակույթը, պատմամշակութային ժառանգությունը, հավատքը, ազգային արժեքները,
- աշխատանքներ է կատարում հայ ընտանիքում հայկական ավանդույթների, սովորույթների, կենցաղավարության պահպանման և զարգացման ուղղությամբ,
- աջակցում է հայ եկեղեցու գործունեությանը, եկեղեցաշինությանը, խաչքարերի, տարբեր հուշարձանների կառուցմանը, հավատքին նվիրվածության և քույր եկեղեցիների հետ համագործակցության ծրագրերին,
- զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրներում հաստատված հայկական համայնքների, կառույցների միջև պահպանում է կապեր, ձևավորում հարաբերություններ, իրականացնում համատեղ ձեռնարկներ,
- ստեղծում է հայկական ցանցեր, ընկերակցություններ, եկեղեցիներ, դպրոցներ, մշակութային օջախներ, երգի-պարի համույթներ, բարեսիրական, երիտասարդական, կանանց, մարզական կառույցներ, գիտահետազոտական հաստատություններ, հայագիտական կենտրոններ, ցեղասպանության կոթողներ,
- հիմք ընդունելով բնակության երկրի օրենսդրությունը՝ համայնքը իրավաբանորեն գրացված է որպես սահմանադրական համայնք (Լիբանան), կրոնական համայնք (Իրան), հասարակական կազմակերպություն (Արևմտյան Եվրոպա, Ամերիկա), ազգային փոքրամասնություն (Արևելյան Եվրոպա) և այլ կարգավիճակներով,
- ունի նաև բազում համայնքային և համազգային մարտահրավերներ՝ տեղաշարժեր, համայնքների փոքրացում, խոշորացում, ազգային ինքնագիտակցության թուլացում, հեռացում ազգային, համայնքային կյանքից, խառնամուսնությունների թվի աճ, երիտասարդների շրջանում հայոց լեզվի վատ իմացություն, արևմտահայերենի կորստի սպառնալիք, հայկական դպրոցներում աշակերտների թվաքանակի նվազում, լեզվի, մշակույթի մոռացության և ձուլման վտանգ, ավանդական և նոր սփյուռքների միջև տարաձայնություններ, համայնքային կյանքում չընդգրկված հայերի մեծ թիվ (80%-ից ավելին) և այլն:

Նշված մարտահրավերներից շատերը բնորոշ են նաև այլ սփյուռքներին: Սակայն հարկ է արձանագրել, որ հայկական Սփյուռքը մոտ մեկ դար համառ պայքար է մղում իր տեսակի, իր

որակների, ազգային ինքնության պահպանման և իր իրավունքների վերականգնման համար[10]: Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների, արդարության վերականգման, ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման հարցերը տեղ են գտել ՀՀ Սահմանադրության առաջաբանում՝ հղում կատարելով Հայաստանի անկախության հռչակագրին: Միաժամանակ, Հայաստանի երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում առաջնային է համարվել Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման համար պայքարի հարցը:

Այդ արդարացի պայքարի համար որպես հիմք են ծառայում հետևյալ կարևոր միջազգային իրավական ակտերը՝

- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը[11],
- Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիան[12],
- 1968թ. ՄԱԿ-ի «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին կոնվենցիան[13],
- Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը[14],
- Սևրի պայմանագիրը[15],
- Լոզանի դաշնագիրը[16],
- հատկապես Թուրքիայի դատարանի 1919թ. որոշումները, վճիռները (հրապարակի վրա 13-ն էին, իսկ Զորյան ինստիտուտի հետազոտության արդյունքներով՝ արդեն 69-ն են),
- միջպետական համաձայնագրերը, Միջազգային դատարանի որոշումները և այլ միջազգային իրավական փաստաթղթեր[17]:

Վերը թվարկած փաստաթղթերը կարող են հիմք ծառայել, որպեսզի Թուրքիայից պահանջվի հայերի անհատական, համայնքային և համազգային իրավունքների ճանաչման և հետևանքների վերացման հետ կապված պարտավորությունների կատարում:

Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման առաջին երկրները եղել են Ռուսատանը, Մեծ Բրիտանյան, Ֆրանսիան, որոնք 1915թ. մայիսին հանդես են եկել հայտարարությամբ. «Ելնելով Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ կատարվող այդ նոր հանցագործություններից՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի դաշնային կառավարությունները սույնով հրապարակայնորեն հայտարարում են Բարձր Դռանը, որ նրանք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա այն տեղական ներկայացուցիչների վրա, որոնք առնչված կլինեն տվյալ կոտորածին»[18]: Այս հայտարարության ընդումման պահին

---

[10].Տե՛ս Հրանուշ Հրանտի Հակոբյան, Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, 2017, էջ 417-420:

[11].Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունված՝ 10.12.1948թ.// http://un.am/res/Human%Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf:

[12].Տե՛ս Prevention and punishment of the crime of genocide, https://undocs.org/en/A/RES/260(III):

[13]. Տե՛ս Convention on the Non-Applicability of statutory Limitionsto War Crimes https:/ undocs.org:

[14].Տե՛ս Հայկական պետության սահմաններն ըստ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Երևան: Տիգրան Մեծ, 2011, էջ 62:

[15].Տե՛ս The Treaty of Sevres, 1920, http://wwi, lib, byu, edu/index.php/Section_I_Articles_1:

[16].Տե՛ս Treaty of Lausanne, http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne:

[17].Տե՛ս Judgment at Istanbul:The Armenian Genocide Trials, by Vahakn N. Dabrian and Taner Akcam, New York and Oxford: Berghahn Books, 2011,363pp, Տե՛ս նաև **Ներսիսյան Մ.,** Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, «Գիտություն», 2005, էջ 100-102:

[18].Տե՛ս Геноцид армян в Османской империи // Сб. документов и материалов, Под ред. М. Г. Нерсисяна, Ереван,

«ցեղասպանություն» եզրույթը հայտնի չէր միջազգային հանրությանը, սակայն ակնհայտ է այն, որ երեք պետությունները հայկական կոտորածները համարում են մարդկության դեմ կատարված հանցագործություն և ողջ պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական ներկայացուցիչների վրա: «Ցեղասպանություն» եզրույթը 1944թ.-ին շրջանառության մեջ է դրել հրեական ծագումով լեհ իրավաբան, քրեական և միջազգային իրավունքի մասնագետ, փաստաբան Ռաֆայել Լեմկինը: Հոլոքոստը վերապրած Լեմկինն այս հասկացությամբ ցանկանում էր նկարագրել համակարգված սպանությունների և բռնությունների նացիստական քաղաքականությունը, ինչպես նաև 1915 թվականին օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրագործված վայրագությունները: Եզրույթը ձևավորվել է հունարեն «γένος»-ռասա կամ ցեղախումբ և լատիներեն «caedo»-սպանել բառերից: 1945 թվականին, երբ Նյուրնբերգի միջազգային ռազմական ատյանը նացիստական ղեկավարությանը դատապարտեց մարդկության դեմ իրագործված հանցագործությունների մեջ, «ցեղասպանություն» բառը ներառվեց դատավճռում, սակայն որպես նկարագրական, այլ ոչ թե իրավական եզրույթ[19]:

Միայն ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայում ամրագրվեց «ցեղասպանություն» եզրույթը:

Հայ ժողովրդի դեմ թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից իրագործված ոճիրը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի բնորոշմանը, ըստ որի՝ «Ցեղասպանությունը այն գործողությունն է, որը կատարվում է լրիվ կամ մասնակիորեն այս կամ այն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբը ոչնչացնելու մտադրությամբ»[20]:

Այսուհանդերձ, Թուրքիան համառորեն չի ընդունում, որ դեռևս 1919թ.-ին թուրքական ռազմական դատարանը հայոց ցեղասպանության կազմակերպիչներին մահապատժի ենթարկելու դատավճիռ է կայացրել՝ դրանով իսկ ճանաչելով ցեղասպանության փաստը:

Ի թիվս տասնյակ երկրների և կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստի՝ մեզ համար անչափ կարևոր է «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» Եվրոպական խորհրդարանի՝ 1987 թվականի հունիսի 18-ին ընդունած բանաձևը, որով առաջին անգամ Եվրախորհրդարանը դատապարտեց հայոց ցեղասպանությունը: Բանաձևի 2-րդ կետում արձանագրված է. **«...**ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի**»,** իսկ 3-րդ կետով՝ «Պահանջում է (Եվրոպական) խորհրդից ճնշում գործադրել ներկայիս կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև»[21]**:**

Միջազգային իրավունքի համաձայն՝ պետությունը միջազգային հանցագործություններով պատճառած վնասի փոխհատուցում իրականացնում է հետևյալ երեք՝ ռեստիտուցիայի, կոմպենսացիայի և սատիսֆակցիայի ձևերով: Ընդ որում միջազգային իրավական պատասխանատվության վերոնշյալ ձևերը կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ:

1983, էջ 602-603:

[19]. Տե՛ս http://www.genocide-museum.am/arm/genocide.php

[20]. Տե՛ս Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, էջ 32:

[21]. http://www.genocide-museum.am/arm/European_Parliament_Resolutio3.php

Եթե դիտարկելու լինենք ռեստիտուցիան՝ որպես միջազգային իրավական պատասխանատվության ձև, ապա այն մինչև միջազգային իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնմանն ուղղված միջոցառումների ամբողջությունն է և՛ նյութական, և՛ իրավական առումներով:: **Նյութական իմաստով ռեստիտուցիան նշանակում** է Թուրքիայի կողմից հայերի նյութական սեփականության՝ տների, կալվածքների, խնայողությունների, արժեթղթերի հատուցում բնեղենով, դրանց վերադարձ ժառանգներին: Իսկ իրավական (ոչ նյութական) ռեստիտուցիան ենթադրում է Թուրքիայի կողմից բոլոր այն իրավական ակտերի անվավեր ճանաչում, որոնք վերաբերում են հայերի սեփականության բռնագրավմանը, ցեղասպանության մերժմանը և այլն:

Միջազգային իրավունքում ռեստիտուցիայի շարունակությունն է կազմում կոմպենսացիան, որը նշանակում է ոչ միայն վնասի փոխհատուցում, այլ նաև բաց թողնված օգուտի հաշվառմամբ կոմպենսացում: Ընդ որում պետության կողմից կոմպենսացիան և՛ նյութական կորուստների, և՛ բարոյական վնասի փոխհատուցում է ենթադրում: Նախադեպային իրավունքի առումով միջազգային հանրությանը հայտնի է կոմպենսացիայի դեպքը, երբ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ֆաշիստական Գերմանիայի կողմից հրեաների նկատմամբ իրականացրած Հոլոքոստը Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից ոչ միայն ճանաչվեց, այլև մինչ օրս պետությունը զբաղվում է հետևանքների հնարավորին վերացման և կոմպենսացիայի հարցերով:

Այլ է սատիսֆակցիայի պահանջը, այն միջազգային իրավախախտմամբ պատճառված բարոյական վնասի հատուցման ձև է և կարող է արտահայտվել միջազգային իրավունքի խախտման ճանաչման, ափսոսանքի արտահայտման, պաշտոնական ներողության հայցման ձևերով:

Այսօր առավել արդիական է հայոց ցեղասպանություն իրականացրած պետության կողմից սատիսֆակցիայի բաղադրիչի կիրառումը, ինչը նշանակելու է, որ

- Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական, հրապարակային ճանաչում, ափսոսանքի և ցավակցության արտահայտում,
- պաշտոնական ներողության հայցում,
- ցեղասպանության մերժման քաղաքականությունից հրաժարում,
- համապատասխան օրենսդրության ընդունում, որը կպատժի ցեղասպանության՝ որպես հանցագործության մերժման համար,
- հայոց ցեղասպանության կատարողների, կազմակերպիչների, մեղավոր անձանց հրապարակային դատապարտում: Այդպիսի անձնավորությունների անվամբ փողոցների, հրապարակների անվանափոխություն և հնարավոր հուշարձանների ապամոնտաժում,
- Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հուշարձանների պահպանություն և վերականգնում:

108-ամյա մաքառման և պայքարից հետո անգամ Թուրքիան շրջափակել է Հայաստանը, որի պատճառով մեր երկիրը տասնյակ միլիարդների հասնող տնտեսական վնաս է կրում, էլ չենք խոսում հայ ժողովրդի հոգեկան և բարոյական տառապանքների մասին:

Թվում էր, որ այսս քաղաքակիրթ աշխարհը չի հանդուրժի հանցագործությունների հանցագործության՝ հայոց ցեղասպանության անհետևանք ու անպատիժ մնալը՝ կանխարգելելով ցեղասպանության ցանկացած դրսևորում[22]: Ցեղասպանությունների կանխարգելման, դատապարտման ու դրանց հետևանքների վերացման հետ կապված հարցերը պետք է օրակարգային դառնան միջազգային հանրության քննարկումներում: Քաղաքակիրթ աշխարհը

---

[22]. Տե՛ս Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ., Ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2015, էջ 24-36; Տե՛ս նաև Հակոբյան Հ.Հ., Հիշում ենք և պահանջում, Երևան, 2020, էջ 371-373:

միասնական ուժերով կարող է պայքարել համամարդկային այս չարիքի դեմ, որպեսզի այլևս ոչ մի տեղ և երբեք այն չկրկնվի:

Ակնհայտ է, որ ցեղասպանության ժխտումը, անհետևանք և անպատիժ մնալը պարարտ հող է ստեղծում նոր ցեղասպանությունների համար:

Հայերը՝ որպես ցեղասպանություն վերապրած ժողովուրդ, բոլոր հնարավոր ձևերով, միջազգային ատյանների ակտիվ ներգրավմամբ պետք է շարունակեն ամենուր բարձրաձայնել իրենց պահանջները՝ ոտնահարված իրավունքների վերականգնման, ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, նրա հետևանքների վերացման համար, որպեսզի մոլորակի որևէ հատվածում ցեղասպանությունը չկրկնվի և նոր ոճիրները կանխարգելվեն:

Սակայն, ցավոք, 21-րդ դարում դեռևս կան երկրներ, որոնք լինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, ստորագրել, միացել են ՄԱԿ-ի կոնվենցիաներին ու հռչակագրերին, սակայն կոպտորեն խախտում են դրանք՝ կատարելով ռազմական հանցագործություններ, մտնելով այլ երկրի ինքնիշխան տարածք, և չեն արժանանում միջազգային հանրության դատապարտմանը, պատժամիջոցների կիրառմանը: Այդպիսին է մեր, այսպես կոչված, «հարևանը», որն անընդհատ դրժում է իր ստանձնած միջազգային, երկկողմ և եռակողմ պարտավորություններն ու պայմանավորվածությունները, այդ թվում՝ ոտնահարում ՄԱԿ-ի կանոնադրությունը, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, 2020թ-ի նոյեմբերի 9-ին Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի և Ադրբեջանի միջև կնքված եռակողմ հայտարարությունը, Արցախի շրջափակումը վերացնելու վերաբերյալ 2023թ-ի փետրվարի 22-ի Հաագայի միջազգային դատարանի որոշումը, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշումը: 2022թ. դեկտեմբերի 12-ից շրջափակելով Արցախը՝ փորձում են էթնիկ զտումների, ցեղասպանական գործողությունների միջոցով տիրանալ դարավոր հայկական տարածքներին՝ Արցախին ամբողջությամբ:

Միջազգային դերակատարների քար լռության և անգործության պայմաններում իր սեփական Հայրենիքում արցախահայության գոյության իրավունքը վտանգված է: 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով իրենց բնօրրանից արմատախիլ եղած մեր հազարավոր հայրենակիցների իրավունքները չեն վերականգնվել, նրանք դարձան փախստական, իսկ մի մասն էլ բռնեց գաղթի ճամփան՝ լրացնելով առանց այդ էլ խոշորագույն հայկական Սփյուռքը:

Հետևաբար անհրաժեշտ է վերանայել և լրացնել միջազգային իրավունքն այնպես, որ եթե **ՄԱԿ-ի անդամ պետությունն իրավախախտում է կատարել՝ ոտնահարելով միջազգային նորմերը, չկատարելով իր ստանձնած պարտավորությունները, ապա ինչպես հանցագործ անձի նկատմամբ է կիրառվում պատիժ, այնպես էլ պետության դեպքում պետք է կիրառվի միջազգային իրավական պատասխանատվության միջոց, ուստի առաջարկում ենք**.

Առաջին. լրացնել միջազգային իրավունքն այնպես, որ նրա նորմերը կիրառվեն իմպերատիվ կարգով,

Երկրորդ. միջազգային իրավանորմերի պահանջների չկատարման դեպքում պետք է տվյալ պետությունը ենթարկվի պատասխանատվության՝ կիրառելով համապատասխան սանկցիաներ,

Երրորդ. միջազգային իրավախախտումը շարունակելու և կրկնվելու դեպքում պետք է դադարեցնել նման պետության անդամակցությունը միջազգային կառույցներին և չճանաչել նրա միջազգային իրավասուբյեկտությունը:

Եթե միջազգային հանրային իրավունքը, հատկապես միջազգային մարդասիրական իրավունքը և միջազգային անվտանգության իրավունքը չգործեն, ապա վտանգված է ողջ մարդկային քաղաքակրթությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Կիրակոսյան Ա.,** Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմաիրավական եռալեզու տեղեկանք), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2006:
2. **Կիրակոսյան Ա.,** Ակնարկներ Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Երևան «Տիգրան Մեծ», 2006:
3. **Հայկական պետության սահմաններն** ըստ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2011:
4. **Հակոբյան Հ. Հ.**, Հայկական Սփյուռքը հարափոփոխ աշխարհում, Երևան, 2017:
5. **Հակոբյան Հ. Հ.,** Հիշում ենք և պահանջում, Երևան, 2020:
6. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.,** Ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2015:
7. **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, Հ. 1, Առաջին տարին, 1918-1919, Երևան, «Տիգրան Մեծ», 2005:
8. **Մարդու իրավունքների** համընդհանուր հռչակագիր, ընդունված՝ 10.12.1948թ.,http://un.am/res/Human%Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf:
9. **Ստեփանյան Ա.,** XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում (պատ. խմբ.՝ Հ. Տ. Մարության), ՀՀ ԳԱԱ հնագիտ. և ազգագրութ. ինստ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 27-28:
10. **Հայ գաղթականությունը** և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985թթ., միջազգային գիտաժողովի զեկուցումներ, 8-10 հոկտեմբեր, 2010թ., Երևան-Ծաղկաձոր, Հայաստանի ազգային արխիվ: Խմբ. խորհուրդ՝ **Ա. Վիրաբյան** և ուրիշներ, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2011:
11. **Ներսիսյան Մ.** Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, «Գիտություն», 2005:
12. **Геноцид армян** в Османской империи // Сб. документов и материалов, под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1983, էջ 602-603:
13. **Дятлов В., Мелконян Э.,** Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, Институт Кавказа, 2009, էջ 8:
14. **Butler K.,** Defi ning Diaspora, Refi ning a Discourse, Diaspora 10 (2), 2001, pp. 189-219, http://sites.middlebury.edu/nydiasporaworkshop/ files/2011/04/Defi ning-Diaspora1.pdf:
15. **Cohen R.** Global Diasporas: An Introduction. Second edition, London and New York, 2008, http://prodiasporaromana.org/wpcontent/uploads/2014/01/ Cohen-2008-Global-Diasporas-An-Introduction-2n Bookos.org.pdf:
16.**Comparative Studies** of Society and History, Cambridge, 2009, 51 (2), pp. 344-370: 17. http://www.merriam-webster.com/dictionary/diaspora:
17.**Convention** on the Prevention and punishment of the crime of genocide, https://undocs.org/en/A/RES/260(III): Non-Applicability of statutory Limitionsto War Crimes https:/ undocs.org:
18. **Deringil S.**, The Armenian Question Is Finally Closed: Mass Conversion of Armenians in Anatolia during Hamidian Massacres of 1895-1897,
19. **Tölölyan Kh.**, Elites and Institutions in the Armenian Transnation, Diaspora: A Journal of Transnational Studies, Volume 9, Number 1, Spring 2000, pp. 107-136, https://muse.jhu.edu/article/444315/pdf

20. **The Treaty of Sevres**, 1920, http://wwi, lib, byu, edu/index.php/Section_I_Articles_1:
Treaty of Lausanne, http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne:
21.**Judgment** at Istanbul:The Armenian Genocide Trials, by **Vahakn N. Dabrian** and **Taner Akcam**, New York and Oxford: Berghahn Books, 2011, 363pp.
22. http://www.genocide-museum.am/arm/genocide.php
23. http://www.genocide-museum.am/arm/European_Parliament_Resolutio3.php

ON THE CAUSES OF THE FORMATION OF THE ARMENIAN DIASPORA AND INTERNATIONAL LEGAL ISSUES OF GENOCIDE

HAKOBYAN HRANUSH
Doctor of Law, Professor
Lecturer of Gavar State University and
Public Administration Academy of the Republic of Armenia
e-mail: hranush.hranti@gmail.com

The article is dedicated to the causes, stages and main features of the formation of the Armenian Diaspora. The author mentions that the Armenian Diaspora is one of the largest Diasporas in the world in terms of the proportion of people living in the Homeland and in the Diaspora, as 2/3 of the nation lives outside the borders of the nation state. Historically, it mainly arose as a result of the Armenian Genocide, and in Diaspora Studies it is accepted as a Diaspora with a victim status, such as the Jewish and Palestinian Diasporas. Reference is made to the legal status of the Armenian Diaspora in different states. It is registered as a constitutional community (Lebanon), a religious community (Iran), non-governmental organization (Western Europe, America), a national minority (Eastern Europe) and so on. Reference is also made to the issues of international legal responsibility for the Armenian Genocide. The conclusion is drawn about the need to review and supplement the international law to an extent that its norms are applied on an imperative basis. If a UN member state commits a crime, violates international norms and fails to fulfill its obligations, then it should be subject to international responsibility, regardless of its natural reserves and resources. The author analyzes the three forms of reimbursement of damages caused by an international offense: restitution, compensation and satisfaction. The challenges faced by the Diaspora and the problems of preserving the national identity are discussed, ways of confronting and solutions to these problems are proposed.

Keywords: *Diaspora, homeland, genocide, United Nations (UN), globalization, national identity, international legal responsibility, restitution, compensation, satisfaction, security.*

О ПРИЧИНАХ ФОРМИРОВАНИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ И МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫХ ВОПРОСАХ ГЕНОЦИДА

АКОБЯН ГРАНУШ
Доктор юридических наук, профессор
Преподаватель Гаварского государственного университета и
Академии государственного управления РА
электронная почта: hranush.hranti@gmail.com

Статья посвящена исследованию причин, этапов и основных особенностей образования армянской Диаспоры. Автор отмечает, что по доле людей, проживающих на Родине и в диаспоре, армянская Диаспора является одной из крупнейших в мире, так как 2/3 нации проживает за пределами национального государства. Исторически она возникла в основном в результате геноцида армян, и в диаспороведении характеризуется как диаспора со статусом жертвы, подобно еврейской и палестинской диаспорам. Рассматривается правовое положение армянской диаспоры в разных государствах. Она зарегистрирована как конституционная община (Ливан), религиозная община (Иран), неправительственная организация (Западная Европа, Америка), национальное меньшинство (Восточная Европа) и т. д. Обсуждаются проблемы международно-правовой ответственности за геноцид армян. Делается вывод о необходимости пересмотра и дополнения международного права с тем, чтобы его нормы применялись в императивном порядке. Если государство-член ООН совершает международное преступление, не выполняет взятые на себя обязательства, то оно должно нести международно-правовую ответственность, независимо от имеющихся у него природных запасов и ресурсов. Автор анализирует три формы возмещения ущерба, причиненного международным преступлением: реституция, компенсация, сатисфакция. Обсуждаются вызовы, с которыми сталкивается диаспора, проблемы сохранения национальной идентичности, предлагаются пути решения проблем.

Ключевые слова: *Диаспора, родина, геноцид, Организация Объединенных Наций (ООН), глобализация, национальная идентичность, международно-правовая ответственность, реституция, компенсация, сатисфакция, безопасность.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.04.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 26.04.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: